**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԾՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 30-ը նոյեմբեր 2016թ

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

***«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

*(Տ. Բաղդասարյան)*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

*(Տ. Բաղդասարյան)*

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար « սննդամթերքի » ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Արմեն-Համիկ եղբայրներ» ՍՊԸ |
| 2 | «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ |
| 3 | «Հ.Ա.Ն.Ս- ՖՈՒԴ» ՍՊԸ |
| 4 | «Մաստերֆուդ» ՍՊԸ |
| 5 | «Շելդա» ՍՊԸ |
| 6 | «Էրիզ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.*

**2 .«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրչավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

*(Տ. Բաղդասարյան)*

2.1 Թվով 6 մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Մասնակիցներից 5 էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, իսկ «Էրիզ» ՍՊԸ-ն ոչ մի փաստաթուղթ չի կցել, ուստի նշված ընկերության հայտը մերժվել է :

2.3 «Շելդա » ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝ « Շելդա » ՍՊԸ -ի կողմից ներկայացված Հավելված 3.3առկա է թերություն՝ ընթացակարգի ծածկագիրը սխալ է:

Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակիցներին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

«Շելդա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

*(Տ. Բաղդասարյան)*

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | 1-ին տեղ զբաղեցրած մասնակից | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | սառեցված ձուկ | կգ | 266 101 | ՉԻ կայացել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին) | | | | | |
| 2 | ճարպ /սալ/ | կգ | 30 984 | «Շեյդա» ՍՊԸ | 42448080 | 50937696 | «Էլիտ Պրոդ»ՍՊԸ | 45030080 | 54036096 |

«ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ -ն 2 -րդ չափաբաժնի, առաջարկել է ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանք;

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/ մերժվել են՝ «Արմեն-Համիկ Եղբայրներ» ՍՊԸ-ի գնային առաջարկի 1-ին չափաբաժինը, քանի որ ներկայացվել է սխալ գնային առաջարկ՝ մասնավորապես գնային առաջարկում սխալ է լրացված ԱԱՀ-ի սյունակը, «Մասերֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկի 1-ին չափաբաժինը, քանի որ ներկայացվել է սխալ գնային առաջարկ՝ մասնավորապես գնային առաջարկ լրացված չէ տառերով, «Հ.Ա.Ն.Ս.- ՖՈՒԴ» ՍՊԸ -ի գնային առաջարկի 1-ին չափաբաժինը, քանի որ ներկայացվել է սխալ գնային առաջարկ՝ մասնավորապես գնային առաջարկում սխալ է լրացված չափման միավորը:

3.3 Ընթացակարգում բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

*(Տ. Բաղդասարյան)*

4.1 **21.12.2016թ.** «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել «Շելդա» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժինի մասով:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ (եթե առկա է) զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների՝ քանի որ «Շելդա» ՍՊԸ-ն և «OUS-ՇԻՆ» ՍՊԸ-ն հանդես են եկել համատեղ գործունեության պայմանագրով /կոնսորցյում/ ուստի հարցում է կատարվում նաև համատեղ գործունեության կողմ՝ «OUS-ՇԻՆ» ՍՊԸ-ն , ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

*(Տ. Բաղդասարյան)*

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

*(Տ. Բաղդասարյան)*

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | Վ. Գասպարյան |
| **Գնահատող** | Ա.Մարգարյան |
| **Գնահատող** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Ա. Հակոբյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ. Բաղդասարյան |